

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«30» հունվարի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ջոն Կարապետյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 108 200 900 (հարյուր ութ միլիոն երկու հարյուր հազար ինն հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառում) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների

վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 108 200 900 (հարյուր ութ միլիոն երկու հարյուր հազար ինն հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ - ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման

համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են.

9.2.1 Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտ,


9.2.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրություն (Հավելված 1),

9.2.3 Առաջադրանք (Հավելված 2),

- 9.2.4 Օրացուցային պլան (Հավելված 3),
- 9.2.5 Նախահաշիվ (Հավելված 4),
- 9.2.6 Տնտեսական և այլ ծախսեր (Հավելված 5),
- 9.2.7 Հաստիքացուցակ (Հավելված 6):

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<p>ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24 Հ/հ 900011024115 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն</p> <p>Նախագահ՝</p> <p>_____ (ստորագրություն) <i>Ռ. Մարտիրոսյան</i> ՌԱՄԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ</p> 	<p>ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ, ք.Գյումրի, Վ.Սարգսյան 5, ԳՏԳԲ 900218001080</p> <p>Տնօրեն՝</p>  <p>_____ (ստորագրություն) ՋՈՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ</p> <p>Կ. Տ.</p>
--	---

Օրագրի գիտական ղեկավար՝

_____ (ստորագրություն)
Ջ. Կարապետյան

Ջոն Կարապետյան
 (անուն ազգանուն)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի

(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Ջոն Կարապետյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « _____ » _____ 2019 թ. N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 108 200 900 (հարյուր ութ միլիոն երկու հարյուր հազար ինն հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով,
(թվերով և բառերով)


ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:


ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և
ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ


Նախագահ՝ Ռադիկ Մարտիրոսյան




(ստորագրություն)



Տնօրեն՝ Ջոն Կարապետյան



(ստորագրություն)



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը

Իրականացնել գիտական հետազոտություններ, որոնք նպատակաուղղված են ՀՀ տարածքի երկրակեղևի կառուցվածքի ուսումնասիրմանը, էներգետիկ և հանքային ռեսուրսների որոնման, հետախուզման երկրաֆիզիկական մեթոդների զարգացմանը, սեյսմիկականության և երկրաշարժերի կանխագուշակման հիմնախնդիրների լուծմանը, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմոկայունության տեսության մեթոդների կատարելագործմանը, երկրաֆիզիկական նոր սարքերի նախագծմանը և նրանց փոքրածավալ արտադրությանը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

Իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան գիտական հետազոտություններ, որոնք կնպաստեն էներգետիկ, հանքարդյունաբերական, բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, հանրապետության ազգաբնակչության սեյսմիկ պաշտպանության ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ծրագրի իրականացմանը:

Աշխատանքին ներկայացվող կարևոր պահանջներից է նրա կատարումը ՀՀ ԳԱԱ կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան, ինչպես նաև ստացված արդյունքների հանձնումը սահմանված ժամկետում:

4. Աշխատանքի բովանդակությունը

Հիմնարար գիտական հետազոտությունների 2015-2020թ.թ. ծրագրի շրջանակներում ինստիտուտը երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության և երկրաֆիզիկական սարքաշինության բնագավառներում 2017 թվականին որպես գիտական գործունեության հիմնական ուղղություններ նախատեսում է երկրակեղևի կառուցվածքի և նրանում ընթացող երկրադինամիկ պրոցեսների ուսումնասիրությունները, օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման, երկրաբնապահպանական, էներգիայի այլընտրանքային աղբյուրների որոնման, ռիսկի գնահատման երկրաֆիզիկական մեթոդների կատարելագործումը, Երկրի մագնիսական դաշտի և նրա վարիացիաների ուսումնասիրությունը, սեյսմաբանական մեթոդներով

Հայաստանի տարածքի երկրակեղևի լարվածադեֆորմացիոն վիճակի և տարածաշրջանի երկրաշարժերի օջախների հետազոտումը, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների, շենքերի և կառույցների սեյսմակայունության տեսության կատարելագործումը և երկրաֆիզիկական նոր սարքերի մշակումը:

Նշված ուղղություններով նախատեսվող ուսումնասիրությունների արդիականությունը պայմանավորված է Հայաստանի հանրապետության տնտեսության զարգացմանը նպաստող այնպիսի կարևորագույն խնդիրների լուծմամբ, ինչպիսիք են Հայաստանի տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի, երկրաբնապահպանական իրավիճակի գնահատումը, կործանարար և ուժեղ երկրաշարժերի ուսումնասիրությունը և կանխագնահատումը, հանքահումքային բազայի ընդլայնումը, երկրաէներգետիկ նոր պաշարների որոնումը, սեյսմակայուն շինարարության տեսական հիմքերի կատարելագործումը, երկրաֆիզիկական սարքաշինության հայրենական արտադրության կազմակերպումը:

Ըստ նշված գիտական հիմնական ուղղությունների և բնագավառների 2019 թվականին նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

Երկրաֆիզիկայի ոլորտում նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

- ✓ Մշակել ՀՀ տարածքի երկրակեղևի համալիր երկրաֆիզիկական մոդելի կառուցման մեթոդական մոտեցումներ՝ երկրակեղևի խորքային կառուցվածքի ճշգրտման նպատակով:
- ✓ Վերլուծել Հայաստանի տարածքի խորքային երկրաշարժերի և օջախների տարածական բաշխվածությունը:
- ✓ Բացահայտել Հայաստանի տարածքի օջախային գոտիների կառուցվածքային առանձնահատկությունները, գնահատել սեյսմատեկտոնական պոտենցիալը:
- ✓ Կազմել ՀՀ տարածքի երկրակեղևի նստվածքային շերտի տարբեր հորիզոնների ամփոփ ձևակառուցվածքային մոդելը՝ համալիր երկրաձևաչափական տվյալներով:
- ✓ Կազմել Հայաստանի տարածքուի համար 2020-2025թթ. ընթացիկ ժամանակահատվածում սպասվող $M \approx 5$ մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժերի օջախների փորձնական հավանականային քարտեզ՝ սեյսմիկ մոնիթորինգի և երկրաշարժերի միջնաժամկետ նախանշանների բացահայտման հիման վրա
- ✓ Ուսումնասիրել Հայաստանի տարածքի ակտիվ օջախային գոտիներում թույլ երկրաշարժերի հիպոկենտրոնների բաշխման օրինաչափությունները:
- ✓ Կովկասի տարածաշրջանի ուժեղ երկրաշարժերի հետցնցումային պրոցեսների համալիր տարածաժամանակաէներգետիկ վերլուծության հիման վրա ստեղծել ուժեղ երկրաշարժերի հետցնցումային պրոցեսների հավանականային մոդելներ:
- ✓ Կենտրոնական Հայաստանի հիմնական օջախային գոտիներում (Դվին, Գառնի, Արարատ) գործիքային ժամանակահատվածում տեղի ունեցած երկրաշարժերի օջախների դինամիկ պարամետրերի (Es, Mo, L, W, ησ, Δσ, u) գնահատում և այդ պարամետրերի ու մագնիտուդի միջև կոռելացիոն կապերի բացահայտում:

- ✓ Հայաստանի տարածքում տեղի ունեցած երկրաշարժերի ելակետային տվյալների վերլուծություն՝ օջախների տարածական բաշխվածության ուսումնասիրության նպատակով:
- ✓ Գլխավոր՝ միջուկային ծագման երկրամագնիսական դաշտի վարիացիաների ամպլիտուդաժամանակային բնութագրերի հետազոտումը ըստ 21-րդ դարի համար մագնիսական դիտակայանների համաշխարհային ցանցից ստացված տվյալների:
- ✓ Ուսումնասիրել արտաքին ծագման երկրամագնիսական դաշտի տարածաժամանակային բնութագիրն՝ ըստ արեգակնային ու երկրամագնիսական ակտիվության ինդեքսների արժեքների:
- ✓ Ներքին ու արտաքին ծագման ռեգիոնալ դաշտի ուսումնասիրումը և ՀՀ տարածքում գրանցվող երկրամագնիսական վարիացիաների առանձնահատկությունների հետազոտումը:
- ✓ Հաղորդիչ իզոտրոպ միջավայրում կետային աղբյուրից առաքվող մագնիսաառաձգական ալիքների տարածման հավասարումների հետազոտումը:
- ✓ Ուսումնասիրել բազմամետաղային հանքանյութի ռենտգենառադիոչափական նմուշարկումը Am -241 ռադիոակտիվ իզոտոպի կիրառմամբ:
- ✓ Պարզել ոչ գծային աղապտիվ ֆիլտրերի կիրառման հնարավորությունները երկչափ երկրաֆիզիկական տվյալների վիճակագրական մշակման ժամանակ:
- ✓ Գնահատել երկրաֆիզիկական մեթոդների հնարավորությունները Հայաստանի հանրապետության պղնձի հանքավայրերի հետախուզման ժամանակ:
- ✓ Էկոերկրաֆիզիկական մոնիթորինգի համակարգի ներդրման նպատակով մշակել Մարմաշեն եկեղեցական համալիրին հարակից սողանքավտանգ լանջի դինամիկ ֆիզիկատերկրաբանական մոդելի (ԴՖԵՄ) մեկնարկային տարբերակը:
- ✓ Բացահայտել ուժեղ ($M_w > 5$) երկրաշարժերով պայմանավորված լավաձադեֆորմացիոն դաշտի փոփոխությունների և երկրակեղևի ժամանակակից շարժումների միջև կապերը՝ Փոքր Կովկասի լեռնային համակարգում:
- ✓ Մշակել և մեկնաբանել դեֆորմոգրաֆի տվյալները և երկրակեղևի թեքումները՝ ըստ Գառնիի դիտարանի տվյալների՝ երկրակեղևի լավաձադեֆորմացիոն վիճակի գնահատման նպատակով:
- ✓ Վերլուծել Հայաստանի տարածքի սեյսմիկությունը, գնահատել սեյսմիկ ֆոնը և երկրակեղևի հնարավոր կրիպները՝ որպես երկրակեղևում դինամիկ գործընթացների ակտիվացման ցուցիչներ:
- ✓ Հետազոտել հիդրոերկրաբանական մոնիտորինգի տվյալները, կազմել Հայաստանի տարածքի հիդրոերկրադեֆորմացիոն դաշտի քարտեզը:
- ✓ Ուսումնասիրել տեղական երկրաշարժերին նախորդող հիդրոերկրաքիմիական էֆեկտները, կազմել երկրաքիմիական բաղադրիչների կոնցենտրացիաների դինամիկայի քարտեզը:

Հետազոտությունների արդյունքում՝

- ❖ Կմշակվի երկրակեղևի համալիր երկրաֆիզիկական մոդելի կառուցման մեթոդական մոտեցումներ:
- ❖ Կգնահատվի ՀՀ տարածքի հիմնական օջախային գոտիների սեյսմատեկտոնական պոտենցիալը:
- ❖ Կկազմվի ՀՀ տարածքի երկրակեղևի նստվածքային շերտի տարբեր հորիզոնների ձևակառուցվածքային ամփոփ մոդելը:
- ❖ Կտեղծվի Հայաստանի տարածքում 2020-2025թթ. ընթացիկ ժամանակահատվածում սպասվող $M \approx 5$ մագնիտուդա ուժգնությամբ երկրաշարժերի օջախների փորձնական հավանականային քարտեզը:
- ❖ Կկառուցվեն սպասվող ուժեղ երկրաշարժերի հետցնցումային պրոցեսների հավանականային մոդելներ՝ Կովկասի տարածաշրջանի ուժեղ երկրաշարժերի հետցնցումային պրոցեսների համալիր տարածա-ժամանակա-էներգետիկ վերլուծության հիման վրա:
- ❖ Կկազմվի Հայաստանի տարածքի հիդրոերկրադեֆորմացիոն դաշտի քարտեզը:

Երկարաժամկետ (2015-2020թթ.) գիտական ծրագրի՝ **ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության տեսության ու պրակտիկայի և երկրաֆիզիկական սարքաշինության ուղղություններով իրականացվող խնդիրների արդիականությունը** և նրանց հիմնավորումը պայմանավորված են ներքոհիշյալ կարևոր պրոբլեմների լուծմամբ.

- I. ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների կատարելագործում:
- II. Սեյսմակայունության տեսության և մեթոդիկայի կատարելագործումը՝ հաշվի առնելով շենքերի և կառուցվածքների կոնստրուկցիաների իրական աշխատանքը և հիմնատակի դեֆորմացիոն առանձնահատկությունները:
- III. Սեյսմիկ սանդղակների կատարելագործում:
- IV. Երկրաֆիզիկական սարքաշինություն:

Դուրս գալով գիտական հետազոտությունների ծրագրի նախանշված ուղղություններից, 2019 թվականին նախատեսվում է իրականացնել.

առաջին պրոբլեմի շրջանակում՝

- ✓ Ուսումնասիրել ՀՀ հողային պատվարների վարքը բնապայման փորձարկումների միջոցով:
- ✓ Մշակել և ներդնել համալիր միջոցառումներ՝ ապահովելու ՀՀ հատուկ նշանակության ջրամբարների անվտանգ շահագործումը:
- ✓ Դիտարկել սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի, որպես այլընտրանքային պարամետրերի, կիրառման հնարավորությունը սեյսմիկ վտանգի գնահատման քարտեզների կազմման նպատակով:

- ✓ Դիտարկել գրունտների առավելագույն արագացման արժեքներով սեյսմիկ վտանգի գնահատման քարտեզների կազմման ճշտության և նպատակահարմարության հիմնահարցը:
- ✓ Ուսումնասիրել ՌԴ-ում պաշտոնապես ընդունված սեյսմիկ ինտենսիվության սանդղակի կիրառման նպատակահարմարության հարցը ՀՀ-ում:
- ✓ Ստեղծել ինժեներա-սեյսմաչափական կայան Գյումրի քաղաքի օրինակով:
- ✓ Իրականացնել սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդների կատարելագործման աշխատանքներ՝ կախված գրունտների տեղադրման պայմաններից և սեյսմիկ վտանգը պայմանավորող չափանիշներից (մաքսիմալ սպեկտրալ ամպլիտուդաներ, տատանումների պարբերություններ, սպեկտրալ հարաբերություններ):
- ✓ Բարձր հաճախականության միկրոտատանումների հիմնական պարամետրերի փոփոխությունների պատճառների հետազոտում:
- ✓ 1988թ-ի Սպիտակի երկրաշարժի հետցնցումների գրանցումներով հաշվարկված Ֆուրյեի սպեկտրներով որոշել գրունտների գերակշռող պարբերությունները Շիրակի գոգավորության այն կետերում, որտեղ կատարվել են նաև միկրոսեյսմերի գրանցումներ:

Երկրորդ պրոբլեմի շրջանակում՝

- ✓ Սեյսմակայունության տեսության նոր՝ հաշվարկային սխեմաների համար ալգորիթմների մշակում:
- ✓ Բացահայտել էմպիրիկ կապեր շենքերի դինամիկ պարամետրերի և դրանց հիմնական պարամետրերի (հարկայնություն, երկրաչափական չափսեր և այլն) միջև:
- ✓ Կառուցել շենքի դինամիկ պարամետրերի, այդ թվում շենքի խոցելիության գործակցի, բաշխվածությունը շենքի առանձին հատվածների համար:

Երրորդ պրոբլեմի շրջանակում՝

- ✓ Տարածքային սեյսմիկ սանդղակի մշակման հիմնական սկզբունքների, կառուցվածքի ուսումնասիրությունների իրականացում:

չորրորդ պրոբլեմի շրջանակում՝

- ✓ Ինքնակարգավորվող ուղղաձիգ սեյսմիկ տվիչի նախագծում, մակետի պատրաստում, փորձարկումներ դաշտային պայմաններում:
- ✓ Պրոտոնային մագնիտոմետրի նախագծում, մակետի պատրաստում, լաբորատոր փորձարկումներ:
- ✓ Պլեզոմետրական մակարդակաչափերի դյուրակիր և ստացիոնար տարբերակների Էլեկտրոնիկայի և կոնստրուկտիվ փոփոխությունների կատարում, փորձնական նմուշների պատրաստում:
- ✓ Ճոճանակային սեյսմիկ տվիչների պատրաստում:

Ինստիտուտի գործունեության զգալի մասը զբաղեցնում է կիրառական հետազոտությունները: Սկսած մեթոդական հարցերից, մինչև տեխնոլոգիա, կիրառական բնույթի քարտեզներ, տարրաբնույթ սեյսմիկ տվիչներ, երկրաֆիզիկական դյուրակիր բազմաֆունկցիոնալ մոնիտորինգային համակարգեր, որոնք իրենց տեխնիկական

բնութագրերով չեն զիջում միջազգային բրենդային ֆիրմաների կողմից արտադրվող սարքավորումներին, բացի այդ գնային և նորարական լուծումներով համարվում են մրցակցային: Նշված սարքավորումների կիրառության ոլորտը բավականին լայն է և ընդգրկում է Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ, Բանակ, Քաղաքաշինություն, Էներգետիկա, արդյունաբերություն:

Ինստիտուտում իրականացվում են 11 ավելի կիրառական բնույթի ծրագրեր, որոնք ենթակա են առևտրայնացման և ունեն իրացման մեծ շուկա, օրինակ.

Տնօրեն՝



(ստորագրություն)

Ջոն Կարապետյան
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

Ջոն Կարապետյան
(անուն ազգանուն)

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի (ծրագրի անվանումը)


№ Ը/Կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	Անվանումը	Համառոտ բովանդակություն	Կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետները	Պահանջվող գումարը (հազ դրամ)
1	Գիտամեթոդական, գիտատեխնիկական և գիտակիրառական ուսումնասիրություններ ի իրականացում, համեմատական վերլուծություն,	Մեթոդական հարցերի մշակում, գիտակիրառական մեթոդների մշակում, համեմատական վերլուծություն	Մեթոդների համեմատական գնահատում, ստացված տվյալների համակարգում և ներկայացում	Որակական և քանակական առնչությունների ներկայացում, մեթոդական, վիճակագրական մշակումներ և վերլուծություններ, քարտեզներ, գրաֆիկներ, կորեր և այլն	01.01.2019-31.03.19	21640.1
2	Տեսական, գիտագործնական, հետազոտություններ, մոդելներ, ռեժիմային դիտարկումների իրականացում	Գիտակիրառական, գիտամեթոդական աշխատանքներ	Մեթոդիկաների կատարելագործում, ստացված տվյալների ուսումնասիրում, դրված խնդիրների լուծում (շարունակական)	Դիտարկումների արդյունքների վերլուծություն, մեկնաբանում, գիտական, գիտակիրառական նոր մոտեցումների առաջարկում	01.04.2019-30.06.2019	27050.3
3	Քարտեզների տարբերակների կազմում, լաբորատոր-փորձարարական հետազոտություններ	Հաշվարկային ալգորիթմների ստեղծում, քարտեզների թվայնացում, լաբորատոր փորձարկումների իրականացում	Հաշվարկների իրականացում, հավասարումների ստացում, քարտեզների տարբերակների կազմում	Հանքային ռեսուրսների որոնման, երկրաբնապահպանական, սեյսմիկ անվտանգության ապահովմանը նպատակատուղված գիտական, գիտակիրառական առաջարկների ձևակերպում, գնահատում	01.07.2019-30.09.2019	27050.3
4	Կատարված աշխատանքների, հետազոտությունների և ստացված արդյունքների ամփոփում	-	-	-	01.10.2019-31.12.2019	32460.2
Ընդամենը						108200.9

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ

Նախագահ Ռադիկ Մարտիրոսյան

Տնօրեն Ջոն Կարապետյան






(ստորագրություն)

(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

Ջոն Կարապետյան
(ստորագրություն)

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով


ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի

հազար դրամ


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	69068.2	13813.6	17267.1	17267.1	20720.4
2	տնտեսական և այլ ծախսեր *	21099.2	4219.8	5274.8	5274.8	6329.8
Ընդամենը (առանց ԱԱՀ)		90167.4	18033.4	22541.9	22541.9	27050.2
ԱԱՀ		18033.5	3606.7	4508.4	4508.4	5410.0
ԸՆԴԱՍԵՆԸ		108200.9	21640.1	27050.3	27050.3	32460.2

Տնօրեն՝


 (ստորագրություն)

Ջոն Կարապետյան
 (անուն ազգանուն)


Գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Օադիկ Հովհաննիսյան
 (անուն ազգանուն)



Ծրագրի գիտական ղեկավար՝


 (ստորագրություն)

Ջոն Կարապետյան
 (անուն ազգանուն)


* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	10186.9
	էլեկտրաէներգիայի ծառայություն	8381.2
	գազի ծառայություն	852.7
	ջրամատակարարման ծառայություն	65.0
	կապի ծառայություն	876.0
	աղբահանություն	12.0
2	Գույք	--
3	Սարքեր և սարքավորումներ	3000.0
4	Նյութեր	1752.3
5	Գործուղումներ	5960.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	--
7	Արշավախմբեր	--
8	Հրատարակման ծախսեր	200.0
	
Ընդամենը		21099.2

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն)

Ջոն Կարապետյան
 (անուն ազգանուն)

Կազմակերպության
 գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Օտղիկ Հովհաննիսյան
 (անուն ազգանուն)



Կ.Տ.

* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Կարապետյան Զոն Կոստիկի	Տնօրեն, Լաբորատորիայի վարիչ	Ե.գ.թ.	200.0
2	Կարապետյան Կարինե Արտաշեսի	Փոխտնօրեն գիտական գծով	Ֆ.-մ.գ.թ.	130.0
3	Հովհաննիսյան Սևադա Մկրտչի	Տնօրենի խորհրդական	Ֆ.-մ.գ.դ.	190.0
4	Կարապետյան Բորիս Կարապետի	Գիտական ղեկավար	տ.գ.դ.	73.0
5	Մինասյան Ռոբերտ Սարիբեկի	Գլխավոր գիտաշխատող	Ե.գ.դ.	125.0
6	Մկրտչյան Գոհարիկ Արտավազի	Գիտական քարտուղար		110.0
7	Թամրազյան Արտուշ Արամի	Բաժնի վարիչ	Ե.գ.դ.	130.0
8	Գյուղակյան Էդուարդ Գրիգորի	Բաժնի վարիչ	Ֆ.-մ.գ.թ.	125.0
9	Գասպարյան Աշոտ Սարգսի	Բաժնի վարիչ		120.0
10	Մինոնյան Անահիտ Հովհաննեսի	Լաբորատորիայի վարիչ	Ֆ.-մ.գ.դ.	129.0
11	Հովհաննիսյան Հմայակ Հովհաննեսի	Լաբորատորիայի վարիչ	Ե.գ.թ.	125.0
12	Ավետիսյան Անդրեյ Մերգևսի	Առաջատար գիտաշխատող	Ֆ.-մ.գ.դ.	75.0
13	Փաշայան Ռոմելա Արտավազի	Առաջատար գիտաշխատող	Ե.գ.թ.	104.0
14	Թորոսյան Հրաչ Տիգրանի	Առաջատար գիտաշխատող	Ֆ.-մ.գ.թ.	80.0
15	Գրիգորյան Վանանդ Գուրգենի	Առաջատար գիտաշխատող, խմբի ղեկավար	Ֆ.-մ.գ.թ.	130.0


* Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը

16	Մկրտչյան Մարիամ Բորիսի	Ավագ գիտաշխատող	Ե.հ.գ.թ.	94.0
17	Գասպարյան Համլետ Սերգեյի	Ավագ գիտաշխատող	Ե.հ.գ.թ.	100.0
18	Բարայան Թամարա Հովհաննեսի	Ավագ գիտաշխատող	Ե.հ.գ.թ.	80.0
19	Մխիթարյան Դոլորես Աղասու	Ավագ գիտաշխատող	տ.գ.թ.	80.0
20	Մկրտչյան Կարուշ Շիրակի	Ավագ գիտաշխատող	Ֆ.-մ.գ.թ.	80.0
21	Ավջյան Կարապետ Էդուարդի	Գիտական աշխատող	Ֆ.-մ.գ.թ.	40.0
22	Վարդանյան Գևորգ Հրաչյայի	Գիտական աշխատող	Ֆ.-մ.գ.թ.	85.0
23	Քարամյան Ռաֆֆի Արայի	Գիտական աշխատող	Ե.գ.թ.	40.0
24	Իգիթյան Հայկ Ալբերտի	Գիտական աշխատող	Ե.գ.թ.	50.0
25	Գասպարյան Ռոլան Կոլյայի	Գիտական աշխատող		86.0
26	Շահպարտոնյան Սերգեյ Ռաֆիկի	Գիտական աշխատող		122.7
27	Չիլինգարյան Ավետիք Զավենի	Գիտական աշխատող /0,5/		35.0
28	Հովսեփյան Աղասի Այվազի	Գիտական աշխատող, 0.5		50.0
29	Ավդալյան Արման Հրաչյայի	Կրտսեր գիտական աշխատող		79.3
30	Մկրտչյան Մերի Արտուշի	Կրտսեր գիտական աշխատող		79.3
31	Օհանյան Մարինե Վանիկի	Կրտսեր գիտական աշխատող		79.3
32	Սարգսյան Ռուդոլֆ Սուրենի	Կրտսեր գիտական աշխատող	Ե.գ.թ.	100.0
33	Մկրտչյան Հայկանուշ Լևոնի	Կրտսեր գիտական աշխատող		79.3
34	Սահակյան Բաբկեն Վազգենի	Կրտսեր գիտական աշխատող		87.9
35	Հովսեփյան Նարինե Վարազդատի	Կրտսեր գիտական աշխատող		79.3
36	Ղազարյան Կարլեն Սուրենի	Կրտսեր գիտական աշխատող		110.0
37	Միրանյան Մամիկոն Արտյոմի	Ավագ ինժեներ		74.0
38	Ռշտունի Սուրեն Գագիկի	Ինժեներ /0,5/		41.3
39	Չիլինգարյան Տաթևիկ Ավետիքի	Ինժեներ /0,5/		41.3

40	Բայբուրդյան Ռուզաննա Ռաֆիկի	Ինժեներ /0,5/		40.0
41	Աբրահամյան Արծվիկ Ռազինի	Ինժեներ/0,5/		40.0
42	Խաչատրյան Էմմա Արամի	Ինժեներ		79.3
43	Մեծոյան Տիգրան Արամի	Ինժեներ		79.3
44	Թովմասյան Քրիստինա Գագիկի	Ինժեներ		79.3
45	Կարապետյան Ռոզա Կոստիկի	Ինժեներ		79.3
46	Գասպարյան Անահիտ Աշոտի	Ինժեներ		79.3
47	Աթոյան Հովհաննես Գագիկի	Ինժեներ /0,5/		45.0
48	Մնացականյան Նորայր Վարազդատի	Արտադրամասի պետ		74.0
49	Մատինյան Վաչագան Պետրոսի	Բազայի պետ		74.0
50	Մատինյան Արմեն Վաչագանի	Տեխնիկ		80.0
51	Մատինյան Անդրանիկ Վաչագանի	Տեխնիկ		90.0
52	Կարապետյան Հակոբ Հայկի	Ներտաշող /0,5/		36.1
53	Մուրադյան Էդուարդ Կարապետի	Տնտեսական գծով փոխտնօրեն		100.0
54	Հովհաննիսյան Ծաղիկ Շահվալադի	Հաշվապահ		140.0
55	Փիլոսյան Անահիտ Հովհաննեսի	Կադրերի գծով տեսուչ		100.0
56	Գևորգյան Սիրվարդ Կարապետի	Գրադարանի վարիչ /0,5/		40.0
57	Ավետյան Ռաիսա Գագիկի	Թարգմանիչ /0,5/		38.9
58	Մովսիսյան Աննա Մյասնիկի	Թարգմանիչ		79.3
59	Խաչատրյան Անահիտ Մերոժայի	Թարգմանիչ		76.0
60	Սահակյան Մամվել Սուրենի	Պահեստապետ		74.0
61	Կարապետյան Աշոտ Հովհաննեսի	հնոցապան		80.0
62	Հարությունյան Վահան Կորյունի	Պահակ		106.102
63	Սիմոնյան Ռուբիկ Հրանտի	Պահակ		106.102

64	Հակոբյան Ամալյա Հայկի	Պահակ		106.102
65		Պահակ		106.102
66	Գինոսյան Նեկտար Մկրտիչի	Հավաքարար		74.0
67		Հավաքարար		
68		Վարորդ		
69		Գործավար		


Կազմակերպության տնօրեն


(ստորագրություն)

Ջոն Կարապետյան

(անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝



(ստորագրություն)

Անահիտ Փիլոսյան

(անուն ազգանուն)



Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

Ջոն Կարապետյան

(անուն ազգանուն)